ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/19

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.02.2018թ. թիվ 03/26-3/2029-18 գրությամբ «Զանգեզուր հասկ» ՍՊԸ-ին ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 05.02.2018թ. թիվ ԴՎԱ/410 գրության հիման վրա, 07.02.2018թ. թիվ 03/26-3/2029-18 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Զանգեզուր հասկ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>«Զանգեզուր հասկ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Զանգեզուր հասկ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 07.03.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հացաթխման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ գնահատող հանձնաժողով) 21.12.2017թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ 09.01.2018թ. բացման նիստի ավարտի օրը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ ընթացակարգում ըստ չափաբաժինների՝ 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել հրապարակել է հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջակել ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովի 19.01.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ մասնակիցների «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն, Ա/Ձ Հրահատ Օհանյան, «Սարգսյաններ» ՍՊԸ-ն, «Էջմիածնի հաց» ՍՊԸ-ն, «Հրանտ Կարապետյան» ՍՊԸ-ն, «ՀԱԳ-ԳԱՀ» ՍՊԸ-ն,

«Արամ Եգանյան և ընկերներ» ՍՊԸ-ն և «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ-ն: «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 5 և Հավելված 5.1 բացակայում են էլեկտրոնային թվային ստորագրությունները, ինչպես նաև ներկայացրած պայմանագիրը չի համարվում նմանատիպ, քանի որ գումարային արտահայտությամբ, պակաս է սույն ընթացակարգի շրջանակներում ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Բացակայում են պայմանագրի հաշիվ ապրանքագրերի պատճենները ...:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 23.01.2018թ. ծանուցել վերոնշյալ մասնակիցներին՝ սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են անհամապատասխանությունները, բացառությամբ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ի, որը շտկումները թերի է կատարել՝ չի ներկայացրել նմանատիպ պայմանագիրը, հաշիվ-ապրանքագրերը և այդ պայմանագրի կատարումը հավաստող փաստաթղթերը, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է և նիստը շարունակվել:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն, որը ներկայացվել է 19.01.2018թ.-ին, «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն ունի 77 604 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ: Հիմք ընդունելով վերոնշյալ եզրակացությունը՝ գնահատող հանձնաժողովը «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Այսպիսով գնահատող հանձնաժողովի կողմից «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է երկու հիմքով՝ 77 604 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու և շտկումները թերի կատարելու հիմքով:

«Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ 77 604 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ Ընկերությունը հայտնել է հետևյալ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

«Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընկերությունը բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով 19.01.2018թ տրամադրված եզրակացության համաձայն՝ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 77 604 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

Ինչպես արդեն նշվել է, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ գնումներին մասնակցելու իրավունք չունեն նաև այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նույն կետի 2-րդ պարբերությունը հստակ սահմանում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, դրանք են՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

«Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ բավարարում է մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունները ստուգելու նպատակով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե համապատասխան հարցում է ներկայացվել: Արդյունքում արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված վերը նշված հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը, այլ կերպ ասած, առկա է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը, որի պարագայում Ընկերությունը չի կարող մասնակցել գնումների գործընթացին: Միևնույն ժամանակ համապատասխան հայտարարությունն իրականությանը չհամապատասխանող գնահատվելու դեպքում չի կարող արձանագրվել մասնակցի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որևէ հիմքի առկայություն, քանի որ մասնակիցը տվյալ դեպքում ի սկզբանե գնման գործընթացի շրջանակում չի ստանձնել որևէ պարտավորություն, որը խախտվել է, կամ թույլ չի տվել պայմանագրով

նախատեսված որևէ պարտավորության խախտում, կամ չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից, ինչպես նաև չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Ընկերության կարծիքով, «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտարարություն, որը ստուգվել է սահմանված կարգով և որի՝ իրականությանը չհամապատասխանելու հանգամանքը հիմք է հայտը մերժելու, այլ ոչ թե Ցուցակում ներառելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետը սահմանում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Գնման գործընթացին մասնակցելը, որը սկսվում է մասնակցի կողմից հայտ ներկայացնելու պահից, հանդիսանում է մասնակցի իրավունքը: Միևնույն ժամանակ մասնակիցը գնման գործընթացի շրջանակներում ստանձնում է որոշակի պարտականություններ, որոնք ծագում են որոշակի փուլից հետո, մասնավորապես՝ ընթացակարգի արդյունքներով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո: Մինչև առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելը, մասնակցի կողմից իրականացվող գործողություններն ուղղված են գնումների ընթացակարգին մասնակցության իրավունքի իրացմանը, որի շրջանակներում մասնակիցը դեռևս որևէ պարտավորություն չի ստանձնում:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 77 604 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, որի հետևանքով Ընկերության կողմից ներկայացված հայտարարությունը որակվել է որպես իրականությանը չհամապատասխանող, համաձայն Օրենքի վերը նշված հոդվածի, Ընկերության կարծիքով, չի հանդիսանում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք, ուստի Ընկերությունը

գտնում է, որ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Անհրաժեշտ է նշել, որ նման դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը իր բազմաթիվ որոշումներով՝ մասնակցի ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու կամ «Ֆինանսական միջոց» որակավորման չափանիշը գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար գնահատելու հիմքով մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը քննելիս:

«Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նմանատիպ պայմանագիրը, հաշիվ-ապրանքագրերը և այդ պայմանագրի կատարումը հավաստող փաստաթղթերը թերի շտկելու վերաբերյալ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հացաթխման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթին:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 21.12.2017թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ընկերությունը 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել հրապարակել է հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջակել ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2»ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովի 19.01.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ մասնակիցների «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 5 և

Հավելված 5.1, որոնց բացակայում են էլեկտրոնային թվային ստորագրությունները, ինչպես նաև ներկայացրած պայմանագիրը չի համարվում նմանատիպ, քանի որ գումարային արտահայտությամբ, պակաս է սույն ընթացակարգի շրջանակներում ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում՝ առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Բացակայում են պայմանագրի հաշիվ ապրանքագրերի պատճենները:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 23.01.2018թ. ծանուցել է Ընկերությանը՝ սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում Ընկերությունը շտկել է անհամապատասխանությունները, սակայն շտկումները թերի է կատարվել, այն է Ընկերությունը չի ներկայացրել նմանատիպ պայմանագիրը, հաշիվ ապրանքագրերը և այդ պայմանագրի կատարումը հավաստող փաստաթղթերը, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է և նիստը շարունակվել:

Ընկերությունը սահմանված ժամկետներում ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը (որակավորման փաստաթղթեր): Սակայն ներկայացված փաստաթղթերում բացակայում էին նմանատիպ պայմանագրերը, հաշիվ-ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի կատարումը հավաստող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովը 19.01.2018թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած որոշմամբ մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը՝ առաջարկելով շտկել անհամապատասխանությունները:

«Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն կատարելով գնման գործընթացում իր ստանձնած պարտավորությունը սահմանված ժամկետում, այն է՝ 23.01.2018թ. ներկայացրել է որակավորման փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընկերությունը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունները, սակայն շտկումները թերի է կատարվել, այն է

Ընկերությունը չի ներկայացրել նմանատիպ պայմանագիրը, հաշիվ-ապրանքագրերը և այդ պայմանագրի կատարումը հավաստող փաստաթղթերը: Ելնելով վերոգրյալից՝ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ի հետագա մասնակցությունը գնման գործընթացին դադարեցրել է:

Ընկերությունը հայտնել է, որ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն կատարել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում ստանձնած պարտավորությունը և սահմանված ժամկետում ներկայացրել է գնահատող հանձնաժողովի կողմից պահանջված բոլոր փաստաթղթերը՝ սկանավորված և ZIP ֆայլ դարձրած տեսքով: Սակայն տեխնիկական վրիպակի պատճառով (ֆայլերը անհասկանալի պատճառներով չեն կցվել) փաստաթղթերի շարքում բացակայում էին նմանատիպ պայմանագրերը, հաշիվ-ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի կատարումը հավաստող փաստաթղթերը:

«Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն ՀՀ գնումներին բողոքարկման խորհրդին խնդրել է հաշվի առնել, որ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, իրականում առկա են ներկայացված պայմանագրի բոլոր փաստաթղթերը՝ թվով 42 պայմանագիր իր համապատասխան փաստաթղթերով:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 13.02.2018թ. ժամը 12:00-ի և 02.03.2018թ. ժամը 12:20-ի նիստերի վերաբերյալ, 13.02.2018թ. ժամը 12:00-ի նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 05.02.2018թ. թիվ ԴՎԱ/410 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի 2-րդ չափաբաժնի մասով «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Հայտերի բացման նիստի ավարտից

հետո սահմանված կարգով Ընկերությանը Armeps համակարգի միջոցով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ և ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է կատարվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ստացված եզրակացության համաձայն՝ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 77 604 ՀՀ դրամի չափով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորումը հիմնավորող փաստաթղթերում առկա էին նաև անհամապատասխանություններ, ուստի Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

Ընկերության կողմից պահանջվող շտկումները չեն ներկայացվել, ուստի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է մերժել Ընկերության հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 13.02.2018թ. ժամը 12:00-ի և 02.03.2018թ. ժամը 12:20-ի նիստերի վերաբերյալ, 02.03.2018թ. ժամը 12:20-ի նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/19 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/19 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2»

ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների 20.12.2017թ. հայտ է ներկայացրել «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 10.01.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

6. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 19.01.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 77 604 ՀՀ դրամի չափով:***

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, որոնք շտկելու անհրաժեշտության վերաբերյալ Ընկերությունը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 23.01.2018թ. ծանուցվել է Armeps համակարգի միջոցով:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից սահմանված ժամկետում թերի են շտկվել անհամապատասխանությունները, ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ ՀՀ ԿԱ առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված եզրակացությունը ստացվել է 19.01.2018թ., որի համաձայն՝ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 77 604 ՀՀ դրամի չափով:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.02.2018թ. թիվ 03/26-3/2029-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 05.02.2018թ. թիվ ԴՎԱ/410 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն

ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2»

ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների 20.12.2017թ. հայտ է ներկայացրել «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի 09.01.2018թ. որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով և որոշվել է Ընկերությանը ծանուցել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Դրա հետ մեկտեղ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 10.01.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա ***19.01.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն 77 604 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Ընկերության

կողմից ներկայացված Հավելված 5 և Հավելված 5.1 բացակայում են էլեկտրոնային թվային ստորագրությունները, ինչպես նաև ներկայացված պայմանագիրը չի համարվում նմանատիպ, քանի որ գումարային արտահայտությամբ պակաս է Ընթացակարգի շրջանակում ներկայացված գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս է Ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Բացակայում են պայմանագրի հաշիվ-ապրանքագրերի պատճենները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 23.01.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով սահմանված ժամկետում շտկել Ընկերության որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրված ծանուցման մեջ նշված անհամապատասխանություն-ները, որոնք սակայն Ընկերության կողմից շտկվել են թերի:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Օրենքի 28-րդ հոդվածի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված լիազորված մարմին, «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման մեջ նշել է, որ եթե

Կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և մասնակիցը կամ Կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը պատվիրատուին չի ներկայացրել մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ապա անկախ նշված ժամկետից հետո մասնակցի կողմից լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու հանգամանքից, պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:

Ընդ որում, այս դեպքում նկատի ունենալով, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունենալու վերաբերյալ, սակայն Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությամբ արձանագրվում է ժամկետանց պարտավորություն-ների առկայությունը, ***ուստի այդ հանգամանքը դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որի արդյունքում դադարեցվում է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին և մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:***

Այսպես, «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն Ընթացակարգի հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված համապատասխան եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ***77 604 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն***, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով նախատեսված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով սահմանված շեմը:

Դրա հետ մեկտեղ Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը, մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերությունը չի շտկել իր կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրված թերությունները, որի հետևանքով չի ներկայացրել հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Այսպիսով, Խորհուրդը, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում է, որ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.02.2018թ. թիվ 03/26-3/2029-18 գրությամբ «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 09410003) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Զանգեզուր Հասկ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**